# ՊԷՅՔԸՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԲԵՐԱ, ԹԻՒ 370, ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԴԻՄԱՑ

## Վաճառատան ընդարձակումը

### ԵՒ ԱՊՐԱՆՔԻ ԲՈԼՈՐ ՃԻՒՂԵՐՈՒՆ ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄԸ

ԱՌԱՋԻՆ ՅԱՐԿ. — Ճամբորդութեան սնտուկներ, ասուեղէններ:

ԵՐԿՐՈՐԴ ՅԱՐԿ. — Զգեստեղէն, պօնէթրի, կանանց վերաբերեալ ապրանքներ:

ԵՐՐՈՐԴ ՅԱՐԿ. — Պերճանքի առարկաներ սալօններու, անգլիական աթոռներ, մարոքէն նստարաններ եւ աթոռներ, կաշեղէն ճիփեր Լուի ԺԴ. եւ Լուի ԺԵ. ոճով կարասիներ:

ՉՈՐՐՈՐԴ ՅԱՐԿ. — Պիւֆէներ, ճաշարաններու եւ ննջասենեակներու կարասիներ, գրասենեակներու, հիւանդանոցներու համար կարասիներ՝ հիւանդի ու անկարի յատուկ, մանուկներու կառքեր եւայլն.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅԱՐԿ. — Աշխատանոցներ:

ՊԷՅՔԸՐ վաճառատան (Բերա, Մեծ Փողոց, Թիւ 370, ֆրանսական դեսպանատան դիմաց) նոր ընդարձակումները յատկացուած են կարասեաց ճիւղին։

Երեք յարկերէ կը բաղկանայ կարասեաց ճիւղին շէնքը, ուր կարելի է գտնել Լոնտոնի, Ամերիկայի և Բարիզի ամէն տեսակ կարասիներ, որով առաջնակարգ տեղ մը կը գրաւէ կարասիներու մեր վաճառատունը։

Ամէն ոք կը հրաւիրուի այցելութիւն տալու այդ ընդարձակուած ճիւղին, առանց բան մը գնելու անպատճառ։ Ճշմարիտ ցուցադրութիւն մըն է կարասիներու, զոր կ'արժէ աչքէ անցընել։

Պէտք է տեսնել բազմաթիւ գործուածները՝ համոզուելու համար թէ մեր պատրաստած կարասիները առաջնակարգ են և լաւ ճաշակով պատրաստուած։

Պէտք է տեսնել եւրոպական դրութեամբ զանազան կարասիներու մեծ այլազանութիւնը, ինչպէս կահաւորման կամ ուրիշ գործածութեան յատուկ կարասիներ, ամերիկեան, ֆրանսական ու անգլիական ձեւով գրասեղաններ, գրասենեակի աթոռներ, մարոքէն կաշիէ կարասիներ։ Իւրաքանչիւրին ճաշակին ու նկարագրին գոհացում տրուած է։

Երբ մարդ խորհի թէ կեանքին մէկ քառորդը անկողնին մէջ կ'անցընէ, բնականաբար պէտք կը զգայ ամուր և հանգստաւէտ մահճակալներ ունենալու։



Ննջասենեակ

Վաճառատունը, անկողնի կազմածներու ընդարձակ ճիւղին մէջ զանազան գիներով և ամէն տեսակ մահճակալներ հայթայթելէն զատ անկողնի կատարեալ կազմածներ ալ կը ծախէ, միշտ նկատի ունենալով առողջապահութեան և հանգըստաւէտութեան պայմանները։ Վաճառատան մէջ կը գտնուին եւրոպական ընտիր մեքենաներ (որոնք կը քրքրեն անկողիններու մէջ գտնուած յարդը, բամպակը, բուրդը եւայլն) և մասնագէտ գործաւորներ, որոնք եւրոպացի գործաւորներու պէս լաւ ապրանքներ կը պատրաստեն։

Կարասիներու ճիւղը կը պարունակէ.

Սալօնի համար պերճանքը կարասիներ, ֆանթէզի աթոռներ, պիւֆէներ, ճաշասրահի և ննջասենեակի կարասիներ, գրասենեակի կարասիներ, նստարաններ և մարոքէն կաշիէ աթոռներ և անկարներու կարասիներ՝ հիւանդանոցներու համար, ողորկ չատ թեթեւ կարասիներ՝ գիւղերու ու պարտէզի համար, կարասիներ մանուկներու համար եւայլն, եւայլն։

Գորգ, կտաւ, լինօլէում, փսիաթ, թաղիք, կտաւէ և կերպասէ վարագոյր, սթոր, օթոցի կերպասներ։

Նաեւ կան կահաւորման աշխատանոցներու մէջ ձեռնհաս օթոցարաններ։



Մարոքէն կարասիներ



Մահճակալ



Սալօնի ճաշասեղան

Ամէն ոք կրնայ այցելել եւ վաճառատան ընդարձակումը տեսնել, առանց որ եւ է գնում կատարելու անպատճառ.

ՆՈՐԱՀԱՍՏԱՏ ՎԵՐԵԼԱԿԻ ՄԻՋՈՑԱՒ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՆ ՅԱՐԿԵՐԸ